

ԿԱՐԾԻՔ

ԱՆԻ ՍԱՐԳՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ
«ԿԵՆԴՐԱՆՈՒՆՆԵՐՈՎ ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԵԶՎԱՃԱՆԱԶՈՂԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆԳԼԱՄԵՐԻԿՅԱՆ ՄԱՄՈՒԼՈՒՄ
(ՀԱՅԵՐԵՆԻ ԶՈՒԳԱԴՐՈՒԹՅԱՄԲ)»

Ժ.02.07 «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական ասպիրանտի հայցման արեւնախոսության մասին

Զանգվածային լրատվության միջոցները իրենց անփոխարինելի դերն ունեն հասարակական գիտակցության, հասարակության մեջ կանխամտադրվածությունների ձևավորման, զարգացման և ամրապնդման գործում: Նրանց դերն ու նշանակությունը հատկապես կարևորվում է նոր սոցիալ-տնտեսական հարաբերությունների և տեխնոլոգիաների, այդ թվում նաև ինֆորմացիոն զարգացման պայմաններում, քանզի մեծացող հասարակական ակնկալիքների պարագայում տեղեկատվությունն ունի մեծ պահանջարկ և իր մշտական սպառողը: Ինչ խոսք, զանգվածային լրատվության միջոցների համակարգում լրագրի առաջնորդող դերն անվիճելի է: Ուսումնասիրությունները փաստում են, որ գրական լեզվի տարատեսակներից լրագրային ոճն է աչքի ընկնում իր ընթերցողների ընդգրկման ծավալով, քանի որ նրան հատուկ է հստակ արտահայտված հաղորդակցական նպատակներն ու ընդգծված գործաբանական ուղղվածությունը: Լրագրային ոճի հիմնական նպատակն ընթերցողին տեղեկատվությամբ ապահովելու, նրա վրա ներգործելու, նրանում համապատասխան աշխարհայացք ձևավորելու և հասարակական-քաղաքական գիտակցության մղելու առանձնահատկություններն են:

Մեր օրերում քաղաքական և տնտեսական խոսույթների ուսումնասիրությունը դարձել է արդիական և առանձին դեպքերում նույնիսկ խիստ անհրաժեշտ՝ հաշվի առնելով այս խոսույթների զգալի ազդեցությունը հասարակական գիտակցության ձևավորման վրա:

Ժամանակակից աշխարհում տեղի ունեցող սոցիալ-քաղաքական փոփոխությունները, որոնք պայմանավորված են քաղաքական և տնտեսական խոսույթներով, պահանջում են գիտական հիմնավորումներ, քանզի դրանց ներգործությունը քաղաքական ու տնտեսական գործընթացների կառավարման գործում բավականին մեծ է:

Այս առումով Անի Հարությունյանի թեկնածուական հետազոտությունը ժամանակակից լեզվաբանական հետազոտությունների արդիական ոլորտի է վերաբերում: Կուզենայի նշել, որ սույն թեկնածուական ատենախոսությունը վերաբերում է քաղաքական և տնտեսական խոսույթներում կիրառվող կենդանուններով փոխաբերությունների համակողմանի ուսումնասիրությանը, որը մեծապես կարևորվում է ճանաչողական լեզվաբանության հարացույցում:

Ատենախոսության թեման հետաքրքրական և **արդիական** է ժամանակակից լեզվաբանական ուսումնասիրությունների համատեքստում, քանի որ նվիրված է ժամանակակից լեզվաբանության հարաճուն հետաքրքրություն ներկայացնող համեմատաբար նոր ճյուղի՝ ճանաչողական լեզվաբանության, մասնավորապես, ճանաչողական փոխաբերության ուսումնասիրությանը: Փոխաբերության ճանաչողական հայեցակերպը կարևորում է փոխաբերության ճանաչողական արժեքը, դիտարկելով այն ոչ միայն որպես լեզվական իրողություն, այլև, նախևառաջ, ճանաչողական գործիք: Փոխաբերությունները մշտապես փոփոխվող ու թարմացվող լեզվական միավորներ են: Ժամանակին զուգահեռ անդադար փոփոխվում ու զարգանում է ոչ միայն լեզուն ու մշակույթը, այլև նրանց բաղադրիչները: Ուստի, հաշվի առնելով փոխաբերության հարաշարժ բնույթը՝ նմանատիպ ուսումնասիրությունները միշտ արդիական են բոլոր ժամանակների համար: Փոխաբերությունը ամենագործածական, ամենահետաքրքրական և ընկալման առումով ամենաբարդ ոճական միջոցներից է: Փոխաբերությունը այլաբերական հնար է, որը մշտապես գտնվել է տարբեր ժամանակների մտածողների ուշադրության կենտրոնում: Փոխաբերությանը նվիրված բազմահատոր աշխատությունները վկայում են խնդրի կարևորությունն ու նրա՝ դեռևս չհաղթահարված հարցերի դժվարությունը: Եվ իրոք, հնագույն ժամանակներից մինչև օրս փոխաբերությունը հետաքրքրական ու արդյունավետ ուսումնասիրության նյութ է տվել տրամաբանությանն ու ոճաբանությանը, իմաստաբանությանն ու փիլիսոփայությանը, ինչպես նաև լեզվաբանության այնպիսի կարևոր բնագավառների, ինչպիսիք են հոգելեզվաբանությունը, հանրալեզվաբանությունը, գործաբանական լեզվաբանությունը, այսօր արդեն՝ ճանաչողական լեզվաբանությունը: Այս համատեքստում լեզու-մտածելակերպ-մշակույթ-հասարակություն հարացույցը դառնում է այն առանցքային կետերից մեկը, որի վերլուծությունը լեզվաբանության համար բազմաթիվ ուսումնասիրությունների աղբյուր է հանդիսանում: Չնայած վերոգրյալ ոլորտի հետազոտությունների օրեցօր աճին՝ տարբեր

լեզուներում լեզվամշակութային երևույթների և հասկացությունների զուգադրական ուսումնասիրության խնդիրները ժամանակակից լեզվաբանության մեջ դեռ ուսումնասիրության և պարզաբանման կարիք ունեն:

Անի Հարությունյանի հետազոտությունից ակնհայտ է դառնում, որ կենդանուններով փոխաբերությունները քաղաքական և տնտեսական խոսույթների անբաժանելի մասն են կազմում և օգնում առավել պարզորեն ընկալել ու հասկանալ տնտեսաքաղաքական բարդ իրադարձություններն ու երևույթները: Ատենախոսն ուսումնասիրել է կենդանուններով փոխաբերությունների առկայացման կաղապարները միաժամանակ և՛ քաղաքական, և՛ տնտեսական լրագրային հոդվածներում, քանի որ այս երկու ոլորտներն աչքի են ընկնում սերտ փոխկապակցվածությամբ և փոխներգործությամբ: Քաղաքականության և տնտեսության փոխգործակցությունը ցանկացած հասարակության կազմավորման հիմքերից է: Գործնականում չկա այնպիսի քաղաքական շարժում, որում չարտացոլվեն տնտեսական շահերը, կամ այնպիսի տնտեսական համակարգ, որի պահպանման գործում քաղաքական արդյունավետ որոշումներն ու օրենքները չլինեն ամենազյխավոր գործոնը: Ուստի, հասարակության քաղաքական և տնտեսական համակարգերի փոխկապակցվածությունը համընդհանուր երևույթ է, որը բնորոշ է բոլոր պետություններին՝ իրենց պատմության բոլոր ժամանակաշրջաններում:

Ատենախոսի կատարած հետազոտության նպատակն է ուսումնասիրել կենդանուններով փոխաբերությունների լեզվաճանաչողական առանձնահատկությունները անգլաամերիկյան մամուլի քաղաքական և տնտեսական խոսույթներում՝ հայերենի զուգադրությամբ: Աշխատանքում արժևորվում է ճանաչողական փոխաբերությունների խորքային շերտերի վերհանումը, որը նպաստում է ճանաչողական գիտելիքի, լեզվաճանաչողության ընդլայնմանը:

Աշխատանքի նորույթը ներկայացված է լայն բանասիրական մոտեցման մեջ: Աշխատանքի **գիտական նորույթը** կենդանուններով փոխաբերական կաղապարների համակողմանի վերլուծությունն է՝ լեզվաճանաչողական հայեցակերպի լույսի ներքո: Առաջին անգամ փորձ է արվել ոչ միայն զուգահեռներ անցկացնել երկու խոսույթների միջև՝ միայն մեկ՝ «կենդանական աշխարհ» աղբյուր տիրույթի դիտանկյունից, այլև վեր հանել քաղաքական և տնտեսական խոսույթը արտացոլող փոխաբերական կաղապարների սեռատեսականիշային հարաբերությունները՝ առանձնակի ուշադրություն դարձնելով ուսումնասիրվող խոսույթներում փոխաբերությունների պատկերասխեմատիկ կառուցվածքի նմանություններին և

տարբերություններին: Առաջին անգամ նաև փորձ է արվել զուգադրել կենդանուններով փոխաբերությունների առանձնահատկությունները անգլաամերիկյան և հայ մամուլում:

Աշխատանքի **տեսական արժեքը** պայմանավորված է փոխաբերության տեսության, ինչպես նաև փոխաբերական կաղապարների վերաբերյալ տեսական գիտելիքների ուսումնասիրությամբ, որոնք կարող են որոշակի ներդրում լինել լեզվաբանության բնագավառներում:

Աշխատանքի **գործնական նշանակությունը** պայմանավորված է նրանով, որ հետազոտության ստացված արդյունքները կարող են կիրառվել ճանաչողական լեզվաբանության, իմաստաբանության, ճանաչողական բառագիտության, ճանաչողական գործաբանության դասընթացներում և սեմինարներում: Ստացված արդյունքները կարող են նաև օգտագործվել մամուլի լեզվի յուրահատկությունների հետազոտումնասիրությունների համար, նպաստել քաղաքական և տնտեսական թեմաներով հրապարակումների լեզվաճանաչողական վերլուծությունների իրականացմանը:

Ատենախոսությունն ունի կուռ և տրամաբանական կառուցվածք. այն բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնք համապատասխանաբար բաժանվում են ենթագլուխների, եզրակացությունից, օգտագործված գրականության, բառարանների և էլեկտրոնային լրատվամիջոցների ցանկից:

Ներածության մեջ ընդհանուր գծերով ներկայացվում են ուսումնասիրության հիմնահարցերը, վերլուծության կիրառման մեթոդները, հիմնավորվում են թեմայի ընտրությունը, արդիականությունը և նորույթը, տեսական և գործնական արժեքը, սահմանվում ուսումնասիրության նպատակներն ու խնդիրները:

Առաջին գլխում («Փոխաբերության ճանաչողական հայեցակերպը») դիտարկվում են *փոխաբերություն* եզրի վերաբերյալ տարբեր լեզվաբանների տեսակետները և տեսական դրույթները, մանրակրկիտ քննության են առնվում փոխաբերության ավանդական և ճանաչողական մոտեցումները, ընդգծվում դրանցում առկա տարբերությունները, ինչպես նաև որոշարկվում են ճանաչողական փոխաբերության հիմնական բաղադրիչները և դրանց փոխկապակցվածությունը: Զուգադրելով փոխաբերության տարբեր դասակարգումները՝ ատենախոսը պատշաճ կերպով ներկայացնում է յուրաքանչյուր դասակարգմանը բնորոշ առանձնահատկությունները՝ վեր հանելով այդ դասակարգումների միջև առկա նմանություններն ու տարբերությունները, և իրավացիորեն նշում, որ որքան էլ տարբերվեն փոխաբերության դասակարգման մոտեցումները, ընդհանուր առմամբ, դրանց հիմքում ընկած է

փոխաբերության՝ ճանաչողական բարդ գործընթաց լինելու գաղափարը, որի ոսումնասիրությունն օգնում է մեզ հասկանալ մարդու փոխաբերական բազմաշերտ մտածողությունը: Այստեղ ընդգծվում է նաև մշակույթի ուրույն դերը փոխաբերությունների ձևավորման գործընթացում, ուսումնասիրվում փոխաբերությունների ընդհանրականության և տարբերակայնության հիմնական պատճառները:

Երկրորդ գլխում («Կենդանուններով փոխաբերական կաղապարների առանձնահատկությունները անգլաամերիկյան քաղաքական խոսույթում») ատենախոսը ուսումնասիրում է կենդանուններով փոխաբերությունների դերը քաղաքական խոսույթում, ներկայացնում ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ է ճանաչողական փոխաբերական կաղապարի և դրա ենթակաղապարների արտապատկերումների առանձնահատկությունները՝ վեր հանելով ենթակաղապարների միջև առկա նմանություններն ու տարբերությունները անգլաամերիկյան և հայ մամուլում:

Ատենախոսության **երրորդ գլխում** («Կենդանուններով փոխաբերական կաղապարների առանձնահատկությունները անգլաամերիկյան տնտեսական խոսույթում») խորությամբ մեկնաբանվում է կենդանուններով փոխաբերությունների դերը տնտեսական խոսույթում՝ որպես տնտեսական բարդ երևույթների ընկալման և ճանաչողության գործիք: Ատենախոսը փորձում է ցույց տալ, որ կենդանուններով փոխաբերությունները ծառայում են որպես տնտեսական բարդ գործընթացների ընկալման և ճանաչողության գործիք: Ընկալելով տնտեսությունը որպես կենդանի օրգանիզմ, մասնավորապես, կենդանի՝ տնտեսական երևույթները նկարագրվում են կենդանական տարբեր քնազդների, կենդանական վարքագծի միջոցով, իսկ կենդանիների շարժումները հրաշալի աղբյուր տիրույթ են գնային քաղաքականության մեջ տիրող կտրուկ, անսպասելի ցատկերն ու թռիչքները նկարագրելու համար: Գովելի է, որ ատենախոսը խորքային վերլուծության է ենթարկում քաղաքականությունն ու տնտեսությունը արտացոլող կենդանուններով փոխաբերական ենթակաղապարները՝ վերհանելով այդ ենթակաղապարների հիմքում ընկած բազմապիսի պատկեր-սխեմաները և սեռատեսականիշային հարաբերությունները:

Տպավորիչ են նաև աշխատանքում տեղ գտած աղյուսակներն ու գծապատկերները, որոնք ատենախոսության եզրահանգումները դարձնում են է՛լ ավելի համակարգված և հիմնավորված:

Եզրակացության մեջ ամփոփվել են աշխատանքի հիմնական արդյունքները, համակարգվել ու ձևակերպվել են կարևորագույն դրույթները:

Գրախոսվող ատենախոսությունը պատկանում է այն գիտական ուսումնասիրությունների թվին, որոնք կարող են ունենալ ակնհայտ շարունակություն, քանի որ կրում են հեռանկարային բնույթ: Այստեղից էլ բխում են որոշ հարցադրումներ և ցանկություններ:

1. Ցանկալի կլիներ առանձին՝ որպես հավելված, ներկայացնել աշխատանքում քննարկված կենդանուններով փոխաբերական կաղապարների ընդհանուր կազմը՝ իրենց բնորոշ փոխաբերական արտահայտություններով, համապատասխան լրագրային օրինակներով, ինչպես նաև համապատասխան հայերեն թարգմանություններով:
2. Աշխատանքն ավելի կշահեր, եթե յուրաքանչյուր գլխից հետո ներկայացվեր ծանոթագրություն՝ լուսաբանելով անհասկանալի հատվածները, բառերն ու արտահայտությունները, ներկայացնելով որոշակի խրթին հասկացությունների, տեսությունների հավելյալ բացատրություններ:
3. Լրագրային հոդվածները հղում կատարելիս ատենախոսը մեծամասամբ նշում է հոդվածագրի հեղինակին, հոդվածի վերնագիրը, լրագրի կամ ամսագրի անունը, թողարկման ամսաթիվը: Այնուամենայնիվ, որոշ դեպքերում ատենախոսը վրիպել է նշել հոդվածագրի հեղինակին և փոխարենը, անմիջապես նշել է հոդվածի վերնագիրը (էջ 99, 108, 125, 130, 148, 166): Ցանկալի կլիներ ցուցաբերել միասնական մոտեցում: Նույնը կարելի է նշել նաև գրականության ցանկում որոշ հեղինակների հայրանունների սկզբնատառերի վերաբերյալ, քանի որ ատենախոսը որոշ դեպքերում նշում է հեղինակների հայրանունների սկզբնատառերը, իսկ որոշ դեպքերում՝ ոչ:
4. Թեպետև, ինչպես արդեն նշվել է, ատենախոսը չափազանց գրագետ հայերենով է ներկայացրել իր տեքստը, աշխատանքում օգտագործվել են «կոնտեյներ» (էջ 34), «հիերարխիկ» (էջ 130), «մոդելավորել» (էջ 30) բառերը, որոնց համարժեքները «պարունակիչ», «ստորակարգային», «կաղապարել» օգտագործված են 35-րդ, 18-րդ և 24-րդ էջերում համապատասխանաբար:
5. Ատենախոսության մեջ երբեմն հանդիպում է ոչ հստակ շարադրանք և առկա են որոշ տեխնիկական վրիպակներ (տե՛ս ատենախոսություն՝ էջ 18, 23, 73, 121):

Նշված հարցադրումները հայեցակարգային չեն և ամենևին չեն ստվերում աշխատանքի գիտական որակն ու կարևորությունը, որն առանձնանում է տեսական և գործնական նյութի գերազանց վերլուծությամբ, կուռ և համապարփակ շարադրանքով, հարցադրումների հստակ պարզաբանումներով և գիտական պատշաճ ոճով: Սույն բազմակողմանի և մանրակրկիտ հետազոտությամբ նոր հեռանկարներ են բացվում ճանաչողական լեզվաբանության զարգացման համար:

Ատենախոսությունը և սեղմագիրը շարադրված են մատչելի լեզվով, դրանց ձևավորումը համապատասխանում է ներկայացվող պահանջներին: Անի Սարգսի Հարությունյանի «Կենդանուններով փոխաբերությունների լեզվաճանաչողական առանձնահատկությունները անգլաամերիկյան մամուլում (հայերենի զուգահրությամբ)» թեմայով ատենախոսությունն իր արդիականությամբ, ընդհանուր բովանդակությամբ, նյութի պատկառելի ծավալով, աշխատանքի վերլուծական ու մեկնողական մասի հազեցվածությամբ, ստացված արդյունքների հիմնավորվածությամբ և կիրառման հնարավորություններով համապատասխանում է «Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին:

Վերոնշյալը հնարավորություն է տալիս միջնորդելու ԵՊՀ գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի առաջ՝ Անի Սարգսի Հարությունյանին շնորհելու բանասիրական գիտությունների թեկնածուի հայցվող աստիճանը՝ Ժ.02.07 «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտության գծով:

Պաշտոնական ընդդիմախոս,

բ.գ.դ., պրոֆեսոր

ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոն

Ա. Ս. Կնյազյան

Հաստատում եմ Ա. Կնյազյանի հարցադրումների լեզվաբանական բնույթը

Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի կողմից:



Մ. Հովհաննիսյան

10.10. 2022